ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՏԱՇԻՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՄԵԾԱՎԱՆ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Դարեր տևած փորձությունների՝ կոտորածների, հալածանքների, գերեվարությունների միջով անցած այժմյան Լոռու տարածքում է գտնվում Մեծավան համայնքը: Մեծավան գյուղի (ունեցել է բացառապես հայ բնակչություն) ներկայիս տարածքը մտել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեջ: Լոռու և Բորչալուի հայաբնակ գյուղերի բնակչության մեծ մասը հայ լուսավորչական եկեղեցու հետևորդներ են եղել, իսկ հինգ գյուղերում՝ Շահնազարում, Շիշթափայում, Սարչապետում, Մեծ Ղարաքիլիսայում և Փոքր Ղարաքիլիսայում մեծամասամբ կաթոլիկ հայեր են բնակվել: Նրանք հիմնականում եկել են Ալաշկերտից:

Մեծավանը նախկինում երկու տարբեր անուններ է կրել: Ըստ ազգագրագետ, բանահավաք Ե. Լալայանի՝ թուրքերի կողմից անվանվել է Ղոշ-Քիլիսա՝ Խոշավանք՝ <<Զույգ եկեղեցի>>՝ գյուղում գտնվող երկու եկեղեցիների պատճառով: Այնուհետև, ըստ Ե. Լալայանի, գյուղն անվանվել է Շահնազար՝ ի պատիվ մելիք Շահնազարյանի, ով ռուսաց կայսեր կողմից Լոռին ստացել էր որպես ժառանգական տիրույթ: Շահնազարը, ըստ երևույթին, եղել է Մելիք-Ջումշուդի ամառանոցը:

Սակայն գյուղի պատմության մեջ մեծ դեր ունեցած Հայր Սարգիս վարդապետ Յազիչյանն իր ձեռագիր հիշատակարանում նշում է, որ բնակավայրն իրենք են կոչել Շահնազար՝ գուցե կրկին նկատի ունենալով Մելիք Ջումշուդին:

Լոռին երկար ժամանակ արևելյան Վրաստանի կազմում գտնվել է Ռուսաստանի տիրապետության տակ:

Ռուսական և վրացական իշխանություններն այն որպես մասնավոր սեփականություն տվել են առանձին իշխանական տոհմերի:

Շահնազարը բավական երկար ժամանակ պատկանել է վրաց Օրբելի իշխաններին:

Հաճախադեպ են եղել հողատարածքների սահմանային վեճերը. հողի պակասը և մշտապես վեճի առարկա լինելը պատճառ են դարձել, որ Բորչալուի գավառում պետական հողերի բաժանումներ հաճախակի տեղի ունենան:

Շահնազարը, Սարչապետը, Շիշթափան օգտվել են Բորչալուի պետական ամառանոցներից :

Հետագայում Հայր Սարգիս վարդապետ Յազիչյանի նախաձեռնությամբ այստեղ գաղթած բնակչությունը վրաց Օրբելյան իշխաններից գնում է ներկայիս Մեծավանի տարածքի հողերի մի մասը :

Մինչև 1978 թ. գյուղն անվանվել է Շահնազար, ապա՝ Մեծավան:

Ըստ ստուգաբանության՝ <<Շահնազար>> նշանակում է թագավորի հայացքին արժանացած:

Մեծավանը գտնվում է Տաշիրի տարածաշրջանում, Լոռու մարզի հյուսիսարևմտյան մասում՝ ծովի մակերևույթից 1520 մ բարձրության վրա, հիմնադրվել է 1822 թվականին: Բնակչությունը գաղթել է հիմնականում Ալաշկերտից: 1820 թվականին գաղթել են Երևանի նահանգի Աեքսանդրապոլի գավառ , շուրջ երկու տարի ապրել Ղափլու և Հոռոմ գյուղերում, ապա հաստատվել են Շահնազար, Սարչապետ, Շիշթափա, Մեծ և Փոքր Ղարաքիլիսա գյուղերում: Շուրջ 70 ընտանիք գալիս բնակվում է Մեծավանում՝ հիմնականում Ալաշկերտի, Մուշի, ապա նաև՝ Կոստանդնուպոլսի, Կարսի ու Վանի բնակավայրերից:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Գյուղը հյուսիսից և արևելքից շրջապատված է Վիրահայոց լեռներով, որի <<Գևո սար>> կոչվող լանջին էլ տեղադրված է: Արևմուտքից շրջապատված է Ջավախքի լեռնալանջերով, իսկ հարավարևմտյան և հարավային մասերով հոսում է Ձորագետի խոշոր վտակ Տաշիրը: Հյուսիսից սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը, արևելքից՝ Ձորամուտ գյուղական համայնքին, հարավ-արևելքից՝ Միխայլովկա գյուղական համայնքին, հարավից՝

Տաշիր քաղաքային համայնքին, որը 10 կմ հեռավորության վրա է գտնվում, հարավ-արևմուտքից՝ Դաշտադեմ գյուղական համայնքին, արևմուտքից՝ Ձյունաշող գյուղական համայնքին:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումներիմիջինտարեկանքանակը (մմ)	420-450մմ
Օդիմիջինջերմաստիճանըհունվարին (°C)	-4…..-10
Օդի միջինջերմաստիճանըհուլիսին (°C)	+16….+20

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Կալինինո/ Շահնազար
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	10
2.2) մայրաքաղաքից (կմ)	174
2.3) մարզկենտրոնից (կմ)	63
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	3,45
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	10
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	5,46
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	44
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1575
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	65,9087/6950,82
6. Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Վրաստանի Հանրապետություն, Տաշիր, Ձորամուտ, Դաշտադեմ, Միխայլովկա, Ձյունաշող
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	093078189
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	Այո, 1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ

10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	6020
2. Գրանցված ծնունդների քանակը	41
2.Մահացության դեպքերի քանակը	39
3.Ամուսնությունների քանակը	9
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	1150
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	241
7. Կենսաթոշակառուների քանակը	218
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	238

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	2
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	256,0
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	8
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1822

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	5545,49
2. Բնակավայրերի հողեր (հա)	582,39
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	65,44
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	5,76
5. Հատուկ նշանակության	4
6. Հատուկ պահպանվող տարածքների	28,5
7. Անտառային	676,7
8. Ջրային	300,81
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1247
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	923
11. Խոզերի գլուխաքանակը	143
12. Գյուղատնտեսական տեխնիկա	7
12.1 տրակտորներ (քանակը)	3
12.2 կոմբայններ (քանակը)	4
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	1150

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	7
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	Այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	8
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	ոչ
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	17
6.2 Էքսկավատորների քանակը	2
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	2
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	0

8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	9 7
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	3

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
Անբարեկարգ ներբնակավայրային և միջբնակավայրային ճանապարհներ	Համայնքի և նրանում ներառված բնակավայրերի ճանապարհների կապիտալ նորոգում, փողոցների բարեկարգում
Մշտական ջրի խնդիր	Համայնքի գյուղական բնակավայրերի ջրամատակարարման ցանցի կապիտալ նորոգում, ջրագծերի անցկացում